ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 342 - Ա 30 մայիսի 2016 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի,«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

*որոշում եմ՝*

1.Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2016 թվականի մայիսի 19-ի N 408-Ա որոշման 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) առողջապահության և սոցիալական ապահովության վարչության՝

ա. պետի և պետի տեղակալի քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 64-2.1-4, 64-2.2-12) անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«բ/ ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Պետական նպաստների մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Հանրային ծառայությունների համարանիշի մասին», «Զբաղվածության մասին», «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Փախստականների և ապաստանի մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն».

բ. սոցիալական ապահովության բաժնի վարիչի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 64-2.2-14) անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«բ/ ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Պետական նպաստների մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Հանրային ծառայությունների համարանիշի մասին», «Զբաղվածության մասին», «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն».

գ. սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 64-3.2-6) անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«բ/ ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Պետական նպաստների մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Զբաղվածության մասին», «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն».

2) իրավաբանական բաժնի վարիչի և գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 64-2.2-37, 64-3.1-11) անձնագրերի 10-րդ կետի «բ» ենթակետի «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» բառերը փոխարինել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ